ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆ ԵՎ ԱՐԱՄԱՅԻՍ ԵՐԶՆԿՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ

Անանց է ճարտարապետության ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի ժառանգության արժեքը: Նրա գեղագիտական դավանանքի, ստեղծագործական ավանդների իմացությունը շատ կարևոր է մեր քաղաքաշինական-ճարտարապետական կյանքում. դա մեզ շատ կօգնի հատկապես այժմ, երբ չունենք մշակութային զարգացման գաղափարախոսություն, երբ հնացել են կամ չեն գործում նախկին հայեցակարգերը, սկզբունքները, երբ թևակոխել ենք «գլոբալիզացիայի» խառնարանը: Ա. Թամանյանը պետերբուրգյան ստեղծագործական և հասարակական-կազմակերպչական մոտ քառորդդարյա բուռն գործունեությունից հետո՝ 1919 թ. հուլիսին՝ պատերազմական դժվարին պայմաններում, եկավ Հայաստան՝ օրհասական վիճակում գտնվող հայրենիքին օգտակար լինելու վճռականությամբ: Սակայն Թամանյանին վիճակված չէր հեշտ ու հանգիստ իրագործել իր նվիրական ցանկությունը: Սոցիալ-քաղաքական հեղաբեկումները տակնուվրա արեցին նրա ծրագրերը…:

Ալեքսանդր Թամանյան, 1936 թ.

Հայաստանում մեծ ճարտարապետի մշտական գործունեությունը սկսվել է նրա կյանքի, այսպես կոչված, «Թավրիզյան շրջանից» (1921 թ. մայիս – 1923 թ. մարտ) հետո: Վերջինս Թամանյանի կենսագրության մեջ է մտել հարկադրական ձևով՝ կապված այդ ժամանակ Հայաստանում տարվող ոչ ազգանպաստ քաղաքականության հետ: Թավրիզից հետո Ա. Թամանյանը Հայաստանում աշխատեց ընդամենը 14 տարի, որոնք եղան բարեբեր, ստեղծագործական պաթոսով և արարումներով լի: Դա ժամանակ էր, երբ ձևավորվում էր նոր կեցության և գաղափարախոսության մշակույթը: Ճարտարապետական ասպարեզը գրեթե դատարկ էր: Ավագ սերնդի վարպետները հիմնականում գործում էին Հայաստանից դուրս՝ Անդրկովկասի տարբեր քաղաքներում, իսկ նոր սերունդը, որ պետք է աջակից և հետևորդ լիներ Թամանյանին, նոր էր գալու: Հայաստանն էլ 1920-ական թվականներին մեծ պահանջ ուներ մասնագետների,

լայնախոհ մտավորականների: Ուշագրավ է և պատկերավոր Գ. Էմինի զուգահեռը. «Եթե Թորամանյանի գործն այն էր, որ աշխարհին ցույց տա, թե հայը ունեցել է հիանալի ճարտարապետություն, ապա Թամանյանի գործը կրկնակի դժվար էր, նա պիտի ցույց տար աշխարհին, որ հայն ունի հիանալի ճարտարապետություն»[1]: Այնպես որ, Թամանյանին էր վիճակվել կրելու և լուծելու հայ նոր ճարտարապետության ռահվիրայի առաքելությունը, ինչը նա կատարեց մեծ նվիրումով, բարձր վարպետությամբ: Հանձին Թամանյանի, հառնեց մարդը, արվեստագետը, գործիչն իր մեծությամբ, լայնախոհ մտավորականի համակողմանի նկարագրով:

Թե որքան գոհ էր Թամանյանը, որ եկավ Երևան և նվիրվեց նրա վերաշինությանը, երևում է 1920 թ. հունիսի 20-ին Եվգ. Լանսերեին գրած նամակում. «Ինչ վերաբերում է ինձ, ապա ես որոշել եմ հիմնավորվել այստեղ և բուժակի նման հնարավորին չափով բուժել իմ հայրենիքի վերքերը՝ հասցված անողոք, դաժան ճակատագրի հարվածներով: Իմ երգը ես համարում եմ արդեն երգված մինչև լրիվ ավարտը: Ինձ համար ես այլևս ոչինչ չեմ որոնում և շատ ուրախ եմ, որ ծերության շեմին կարող եմ այստեղ դատարկ տեղում ստեղծել ինչ-որ բան, աշխատել արվեստի, գլխավորապես ճարտարապետության ոլորտում»[2]:

Ա. Թամանյանը 1920–30-ական թվականներին մշտապես գտնվել է երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքաշինական զարգացման հարցերի լուծման ակունքներում: Մեծ ջանք ու եռանդ է ներդրել ջրաշինարարության՝ անջրդի հողերը ոռոգելի դարձնելու, ճահիճների չորացման, ջրանցքների և ջրատարների կառուցման, Հրազդան գետի հունը կարգավորելու, Սևանի ներուժի խելամիտ օգտագործման ուղղությամբ: Շատ է կարևորել էներգետիկայի զարգացման, Դիլիջանի հողերի սողանքների կանխման, Երևանի կանաչապատման և այլ խնդիրներ: Շոշափելի է նրա ավանդը հատկապես պատմամշակութային հուշարձանների պահպանության գործում, որի նախաձեռնողը, կազմակերպողը, իրավական և գործնական խնդիրների լուծողը եղավ ինքը՝ մեծ ճարտարապետը: Բարձր է գնահատել Անիի, Զվարթնոցի, Հաղպատի, Սանահինի, Սևանի, նաև մահմեդական ճարտարապետության հուշարձանների (Երևանի Սարդարի մզկիթ և պալատ, Կապույտ մզկիթ) հետազոտությունն ու պահպանությունը, հնագիտական արշավախմբերի կազմակերպումը, շենքերի նորոգումն ու արդիականացումը, հայերեն տերմինաբանական և թարգմանական բառարանների ստեղծումը:

Ծանոթանալով Թամանյանի բազմաբեղուն գործունեությանը՝ զարմանում ես, թե ճարտարապետը որքան ժամանակ ու եռանդ է նվիրել նաև «ոչ ճարտարապետական» խնդիրներին: Այդ առումով նա շատ է նմանվում իր մերձավոր նախորդին՝ Հովհ. Թումանյանին, որի մասին Օսկար Ուայլդի խոսքերով ասում են, թե նա իր տաղանդը գործի դրեց գրականության մեջ, իսկ հանճարը ծախսեց կյանքում[3]:

---

[1] *Գ. Է մ ի ն. Սկիզբն ու ակունքը.– «Սովետական արվեստ», 1978, -5, էջ 25:*

[2] *Ա. Թամանյանի թանգարան, թղթ. 5:*

[3] *Ա. Ի ս ա հ ա կ յ ա ն. Հովհաննես Թումանյան.– Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 21:*

Հայ ճարտարապետության մեջ իրավամբ շատ խոշոր է Ա. Թամանյանի ներդրումը. նա հայ նոր ճարտարապետության ռահվիրան է, հիմնադիրը: Դրա առհավատչյան են նրա կազմած Երևանի գլխավոր հատակագիծը, նախագծած եզակի շենքերը՝ Երևանի ՀԷԿ-ը, Օպերայի և բալետի շենքը, Կառավարական տունը: Մարտիրոս Սարյանը գրել է. «Երևանն էլ, իհարկե, կարող էր այլ տեսք ունենալ և շատ հնարավոր է՝ ոչ այսքան ինքնատիպ: Բայց մի՞թե այսօրվա Երևանի ճարտարապետական անկրկնելիությունը չի խորհրդանշում ճարտարապետի՝ Թամանյանի և ղեկավարի՝ Երզնկյանի արարիչ համագործակցությունը: Հարկավոր է ղեկավարի մեծ կուլտուրայի և տաղանդի տեր լինել, որպեսզի կարողանալ հասկանալ և նպաստել սքանչելի ճարտարապետի մտահղացումների իրականացմանը»[4]: Իրոք, կարդացեք ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, Երքաղխորհրդի նախագահ Ա. Երզնկյանի զեկուցումները, ելույթները Քաղխորհրդի, Գերագույն խորհրդի նստաշրջաններում, ծանոթացեք նրա ծրագրերին և պատկերացումներին Երևան քաղաքի ու հանրապետության քաղաքաշինական զարգացման վերաբերյալ և կհամոզվեք, որ նրա ներդրումը նաև քաղաքաշինության բնագավառում պատկառելի է: Հիշենք, որ դրանք տարիներ էին, երբ յուրաքանչյուր հետադարձ հայացք, հայացք դեպի ճարտարապետական ժառանգությունը հղի էր անցյալը իդեալականացնելու, ազգային սնապարծության, ազգայնամոլական մեղքերի մեջ մեղադրվելու ահավոր վտանգով: Իսկ Թամանյանն իր ոգորումի աղբյուրը տեսնում էր անցյալի ժառանգության մեջ. մեծ տեղ էր տալիս բարդ և աշխատատար ճարտարապետական ձևերին, օգտագործում էր սրբատաշ, թանկ արժեցող շինաքարեր ու կոնստրուկցիաներ, զանգվածային ձևով քանդել էր տալիս Երևանի խարխուլ ու կավաշեն տները, երբ բնակարանային շինարարության տեմպերը շատ աննկատ էին: Եվ միայն Երզնկյանի նման հզոր համախոհի ու աջակցի շնորհիվ հնարավոր եղավ իրականացնել Երևանի վերակառուցման անհրաժեշտ թվացող ծրագիրը, իր ճարտարապետական գլուխգործոցները: Բայց դա թեթև չնստեց Երզնկյանի վրա. դրա համար նա հատուցեց կյանքով: Նույն ճակատագրին կարժանարար նաև Թամանյանը, եթե վերահաս մահը 1936-ին նրան «չփրկեր» նման ռեալ վտանգից:

Արամայիս Երզնկյան, 1936 թ. (վերջին լուսանկարը)

Անդրկենտրոնի 1926 թ. հունվարի 29-ի Երևանում գումարված եզրափակիչ նիստում որոշվեց Երևանում կառուցել Ժողտուն: Որոշման կատարումը

[4] *Մ. Ս ա ր յ ա ն. Բարություն ճառագողը.– Արամայիս Երզնկյան. դեմք՝ լեգենդ, Երևան, 2002, էջ 37:*

հանձնարարվեց Հայաստանի կենտգործկոմին, որն էլ անմիջապես ձեռնամուխ եղավ կազմակերպչական խնդիրների լուծմանը: Չնայած Թամանյանին էր պատվիրված շենքի նախագծումը, այնուամենայնիվ քաղաքաշինական դերի, ֆունկցիոնալ և գեղարվեստական խնդիրների հստակեցման նպատակով, իր իսկ պնդմամբ, հայտարարվում է բաց մրցույթ, որի ծրագիրը մշակում և կազմակերպչական գործում մեծ դեր է կատարում հենց ինքը՝ Թամանյանը:

1927 թ. հուլիսի 6-ին Հայաստանի կոմկուսի և կառավարության միացյալ նիստում քննարկվում ու հավանության է արժանանում Թամանյանի կազմած Ժողտան նախագիծը՝ ներկայացված մի քանի տարբերակներով: Նման հսկայածավալ, տեխնիկական և տեխնոլոգիական առումով բարդ ու բացառիկ շինություն Անդրկովկասում առաջինն էր կառուցվելու, որի կարևորությունը և յուրօրինակությունը զգում էր ոչ միայն Հայաստանի, այլև Անդրֆեդերացիայի ղեկավարությունը, սակայն դա ոչ մի չափով երաշխիք չէր կառույցի ռիթմիկ և անկաշկանդ իրականացման համար: Ճիշտ է նկատվել, որ «Թամանյանի թողած հսկայական ժառանգության մեջ Օպերայի թատրոնի նախագիծը եղել է նրա ամենասիրվածն ու փայփայածը: Միևնույն ժամանակ ոչ մի կառույց նրան այնքան հոգս ու դառնություն չի պատճառել, հոգեկան ու ֆիզիկական ուժերի այնպիսի լարում չի պահանջել, որքան Օպերայի թատրոնի շենքը»[5]: «Հոգսի ու դառնության» պատճառները շատ են, որ կարելի է բաժանել երկու խմբի՝ արտաքին և ներքին: Արտաքինը Անդրֆեդերացիայի վերին իշխանությունների քմահաճ վերաբերմունքն էր կառույցի ֆինանսավորման, նախագծային լուծումների և մտահղացումների կամայական վերափոխումների, խաթարումների ուղղությամբ: Գործին հատկապես շատ էին հարվածում կառույցի ֆինանսավորման պարբերաբար դադարեցումները՝ առաջ բերելով աշխատանքային ռիթմի խախտում, բանվորական ուժի ցրում, պարապուրդ և այլն: Ներքին պատճառը ճարտարապետության գեղարվեստական-ոճական ուղղվածության հետ կապված հակասություններն էին: Թամանյանն իր առաքելությունը սկսեց համախոհների՝ այլ երկրներից հայրենի հարկի տակ հրավիրված ճարտարապետների աջակցությամբ, մինչև որ 1920-ական թվականների վերջին Հայաստանում աշխատանքի անցան Մոսկվայի բարձրագույն գեղարվեստատեխնիկական և Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտներն ավարտած երիտասարդ ճարտարապետները, որոնք այդ տարիներին առավելապես Եվրոպայում և Ռուսաստանում տարածված ճարտարապետական նոր ուղղությունների ջատագովներ էին: Եվ սկսվեց ստեղծագործական մրցակցությունը թամանյանական և, այսպես կոչված, կոնստրուկտիվիստական ուղղությունների հետևորդների միջև, ինչը հաշտ ու խաղաղ չի անցել. հաճախ են խախտվել «խաղի կանոնները», տեղի են ունեցել սուր բախումներ, որոնք թե՛ բարոյական և թե՛ ֆիզիկական առումներով շատ ծանր էին նստում Թամանյանի վրա:

Ա. Երզնկյանը հանդես է գալիս հոդվածով և խարազանում կոնստրուկտիվիզմի կողմնակիցներին ծայրահեղությունների մեջ ընկնելու, իրականությունից

---

[5] *Դ. Մ ա ն ո ւ կ յ ա ն. Ժողտուն (նախապատմությունը), Երևան, 2005, էջ 3:*

կտրվելու, ձևը գերադասելու և այլևի համար[6]: Բայց որքան տակտով, բարյացկամությամբ, վերլուծական մոտեցումով է անդրադառնում խնդրին: Հոդվածը, թեպետ ներկայացված է որպես «ֆելիետոնի փոխարեն», սակայն դրանում «ֆելիետոնայինը» վերաբերում է, երևի թե, միայն ոճին և հումորախառն մոտեցումներին: Երզնկյանը, լինելով թամանյանական ուղղության ջատագովը, այնուամենայնիվ, թվում է, թե համաձայնություն է հայտնում «երիտասարդ ինժեներների» դավանած հիմնական գաղափարներին. «Մեր դարում – մեքենայի դարում,– երբ պահանջվում է նյութի և ժամանակի առավելագույն տնտեսում, կառուցումները տարվում են պապենական օրինակով, ստեղծելով մասսիվ սյուներ, պիլյաստրներ, ֆրոնտոններ և զանազան խայտաբղետ օրնամենտներ, վատնելով այդ կառուցումների վրա մի քանի անգամ ավելի նյութ և ժամանակ, քան այդ թույլ է տալիս տեխնիկայի այժմյան դրությունը... Զեզանից շատերը գրում են, հարկավոր է ազատվել հին ֆեոդալական-կղերական ոճից, տալ բանվոր դասակարգի իդեոլոգիային համապատասխանող ոճի շենքեր: Իմաստուն խոսքեր, որ ոչ մի ընդդիմախոսություն չեն վերցնում, չենք կարող ձեզ հետ չհամաձայնել... Դուք ասում եք, որ մեր շենքերը և նրանց մասերը հարկավոր է ստանդարտիզացիայի ենթարկել... անհրաժեշտ է մեր շինարարությունը մեքենայացման ենթարկել, նույնպես և շինանյութեր պատրաստելը: Այս բոլորը ճիշտ է, միանգամայն ճիշտ: Սակայն մի բանում սխալվում եք, որ կարծում եք, այս «գյուտերի» հեղինակը դուք եք... Հարցը գրելու, խոսելու ու որոշելու մեջ չի, այլ կիրառելու հնարավորությունների մեջ»[7]: Ուշագրավ է Երզնկյանի տրամաբանությունը և հեգնանքը. «Ինչպես ամեն մի բարեպաշտ և հայրենասեր հայ պարտավոր է տեսնել Զվարթնոցը – դուք ևս – տեսել եք այն և տեսել եք այնտեղ քանդակված ողկույզներ: Ուրեմն Հողժողկոմատի շենքի ոճը վանական-կղերական է: Թե ինչու Զվարթնոցից են վերցված այդ խաղողի ողկույզները և ոչ այգիներից, որը մշակում է հայ աշխատավոր գյուղացին – անհասկանալի է: Երևի Համամիութենական գերբը, որը նույնպես զարդարված է հասկերով – իր հղացումն ստացել է Զվարթնոցի Խաչիկ վարդապետից»[8]: Նա խոսքը վերջացնում է այսպիսի ֆրազով. «Այ, օրինակ, եթե Հայաստանում դուք թեկուզ մի գոմ շինած լինեիք, և այն էլ ենթարկած ստանդարտիզացիայի, մեքենայացման, կիրառած պրոլետարական ոճը՝ համապատասխան բանվոր դասակարգի իդեոլոգիայի, մենք երախտապարտ կլինեինք ձեզ»[9]:

Երզնկյանը հատուկ անդրադարձել է նաև ոճի խնդրին. «Քիչ չեն մեզանում շենքեր, որոնք իրենց վրա կրում են ֆեոդալիզմի և եկեղեցականության կնիքը... բնականորեն նրանից մենք պիտի հիմնովին ազատագրվենք... Պայքարելով ճարտարապետական էկլեկտիզմի և տակավին կենսունակ ոճավորման գերիշխանության դեմ, մեր ապագա ճարտարապետներն ունեն մեկ ուրիշ պակասություն.– նրանց աշխատանքները մեծ մասամբ շատ տեսական են, սխեմատիզմն ու վերա-

---

[6] *Ա. Ե ր զ ն կ յ ա ն. Մի քանի խոսք և մի քանի պահանջ, ֆելիետոնի փոխարեն.– «Խորհրդային Հայաստան», 11. VI. 1928:*

[7] *Նույն տեղում:*

[8] *Նույն տեղում:*

[9] *Նույն տեղում:*

ցականությունը, որոնք մինչև իսկ ուտոպիզմի են հասնում, ցուցադրված սովորական նախագծերի գլխավոր արատներն են...»[10]: Նա կարծում է, որ նոր ճարտարապետությունը, դնելով «պրոլետարական շինարարության ճշգրիտ պրոբլեմը, ինքը կտրված է հողից և սավառնում է եթերում», որ այն նկատի չի առնում մեր բնությունը, կենցաղը, շինանյութերը, կլիման և այլն: Երզնկյանը կատարում է պատկերավոր համեմատություն. «Մեր մասնագետներից ոմանց «կատաղության» են հասցնում կամարակապ պատուհանները, այնպես՝ ինչպես ցուլերին կատաղեցնում է կարմիր շորի կտորը: Այդ մարդիկ մոռանում են այն տարրական հանգամանքը, որ այդ արդյունք է այն շինանյութերի, որոնք կան մեր երկրում... Այդպիսի շինանյութերի առկայությունը պահանջում է համապատասխան ձև, այսինքն կամարակապ ձևեր, որոնք երբեք չեն հանդիսանում սպեցիֆիկ– եկեղեցական»[11]: Որ Ա. Երզնկյանը ազնիվի, բարեկամի ջատագով էր, երևում է նաև հոդվածի վերջին ֆրազից. «Իմ բարեկամ Ալազանին,– և դո՛ւ, Բրուտոս»:

...Մեծ է Ժողտան արժեքը որպես ճարտարապետական-քաղաքաշինական ստեղծագործություն: Իր հորինվածքով այն կենտրոնակազմ է՝ զուսպ, միասնական, օրգանապես ներդաշն: Օվալաձև, եռաստիճան ծավալային լուծումը Թամանյանի ստեղծագործական հավատամքի բնութագրական կրողն է՝ դասական և ազգային ավանդույթների համադրումով, հեռավոր նախօրինակ ունենալով, ինչպես համարվում է Հռոմի Կոլիզեյն ու Զվարթնոց եկեղեցին: Հեղինակը հանդես է եկել որպես նորարար, կիրառելով նոր ժամանակների կոնստրուկտիվ և կառուցվածքային հնարավորությունները, թարմ համադրությունների և զուգորդումների ճանապարհով հաջողությամբ կերտել է շենքի նոր տիպ՝ ժամանակի ոճական ու ստեղծագործական ըմբռնումներին համահունչ, երկդահլիճ շինություն՝ կենտրոնում ճարտարագիտական մտքի ամենահամարձակ լուծումներ ունեցող, փոխակերպվող բեմական մասով:

Ժողտան գեղարվեստական կերպավորման խնդիրները մեծ հետաքրքրություն առաջացրին մտավորականության շրջանում: Դա առիթ ու պատրվակ եղավ Թամանյանի շուրջը մշակույթի գործիչների համախմբելուն: Գրողների, արվեստագետների, նկարիչների մի ընտրանի, որը բարոյական, ստեղծագործական, մարդկային և այլ առումներով նեցուկ եղավ նրան իր առաքելության բարդ ու դժվարին ճանապարհին: Այդ խումբը կազմում էին Մ. Սարյանը, Մ. Շահինյանը, Թ. Թորամանյանը, Ե. Չարենցը, Գ. Յակուլովը, Կ. Զավրիևը, Հ. Կոջոյանը, Ա. Սպենդիարյանը, Ն. և Եվգ. Լանսերեները, Գ. Շիրմազանը և շատ ուրիշներ: Մ. Սարյանը 1926 թ. Փարիզից Թամանյանին նամակներ է գրում, որոնցում ներկայացնում է, թե փարիզյան բնակարաններում ինչպես են հաշվի առնված ջերմաստիճանի մեծ տատանումները կամ ինչպիսի հորինվածք ունեն թատերական շենքերը[12]: Վիեննայից Պ. Մակինցյանն ուղարկում է եվրոպական թատրոնների նախագծեր, Պետերբուրգից Ն. Լանսերեն՝ թատրոնին վերաբերող գրականություն և նախագծային

---

[10] *Ա. Ե ր զ ն կ յ ա ն. Մեր շինարարության հիմնական խնդիրներից.– «Խորհրդային Հայաստան», 8. VIII. 1928:*

[11] *Նույն տեղում:*

[12] *Մ. Ս ա ր յ ա ն. Նամակներ, հ. I, Երևան, 2002, էջ 326–327, 337–338:*

նորմեր, նաև նշանավոր թատրոնների լուսանկարներ: Յուրաքանչյուրը ցանկացել է իր կարեցածին չափ օգտակար լինել ճարտարապետին: Ջերմությամբ, մտերմությամբ, հարազատությամբ են շնչում այդ հարաբերությունները, հատկապես նրանց նամակագրությունը, որ այդ հարաբերությունների հարազատ անդրադարձն է:

Ա. Երզնկյանը տնական ժամանակ լինելով նաև Ժողտան շինարարության պետը, ի պաշտոնե մեծ պարտավորություն ուներ այդ կառույցի շինարարության գործերի համար, ինչին վերաբերվում էր մեծ պատասխանատվությամբ, պատրաստակամությամբ, օպերատիվ ձևով արձագանքում էր բարձրացված խնդիրներին, նախաձեռնում, ներդնում իր ողջ ունակությունները, մեծ հեղինակությունն ու կապերը: Ամեն օր տասնակ հեռագրեր, նամակներ, գրություններ են ստացվել ամենատարբեր մարմիններից, կապված կառույցի կոնստրուկտիվ հանգույցների, շինանյութերի, նախագծային լուծումների և այլնի հետ՝ «Շտապ Երևան Ժողտան շինարարություն Թամանյանին», «Հայաստանի Ժողկոմխորհ Երզնկյանին» հասցեներով: Ժամանակակիցներից Գ. Շիրմազանը նշում է. «Հատկապես պետք է շեշտել, որ Թամանյանի նախագծի իրագործման մեջ հատուկ օժանդակություն ու եռանդ է ցուցաբերում Երզնկյանը: Նրան անընդհատ կարելի էր տեսնել հին Երևանի խարխուլ շենքերի քանդման շրջանում, մանավանդ մայրաքաղաքի հիասքանչ Լենինի հրապարակի բացման օրերին: Պատահական չէ, որ ժողովրդի մեջ սիրով նրան «Արամայիս Շինարար» էին անվանում»[13]: Շինարար Հ. Մելիք-Աղամիրյանը Երզնկյանի մեծ ծառայությունն է համարում այն, որ «նա խստորեն վերահսկում էր շինարարական օբյեկտները քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված տեղերում ճշտորեն տեղադրելը, դրանով իսկ ամրացնելով Թամանյանի նախատեսած քաղաքաշինական կմախքը... Արամայիս Երզնկյանը Հայաստանի խոշոր կառուցումների ղեկավարներին պարտավորեցրել էր ուշադիր լինել Ժողտան շինանյութերի կարիքների նկատմամբ... Երբ մեզանից որևէ մեկն այդ գործը մոռացության էր տալիս, ապա Երզնկյանի մշտարթուն աչքը զգացնել էր տալիս իրեն: Նրա հեռախոսային բարեկամական զանգը մոռացողին սթափեցնում էր»[14]: Երզնկյանն էր, որ Թամանյանի հետ ապացուցում էր Լենինի հրապարակի վրա Կառավարական տան կառուցման հնարավորությունն ու նպատակահարմարությունը:

Ահա Թամանյանի կարծիքը Երզնկյանի քաղաքաշինական պատկերացման մասին. «Արամայիս Երզնկյանն ուներ ճշգրիտ տեսանելի պատկերացում նոր Երևանի ճարտարապետական կերպարանքի մասին: Պատկերացում, որը, բարեբախտաբար, տարբերվում էր այլախոհ, ամեն մի դրսևորմանը անհանդուրժող մարտնչող պատանյակ-կոնստրուկտիվիստների և նրանց բարձրագույն պաշտոնատար հովանավորների ագրեսիվ դեկլարացիաներից...»[15]:

---

[13] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 810, ց. 1, գ. 17, էջ 16:*

[14] *Հ. Մ ե լ ի ք - Ա ղ ա մ ի ր յ ա ն. Հանդիպումներ Թամանյանի հետ.– Ալեքսանդր Թամանյան, Երևան, 1960, էջ 142:*

[15] *Ժամանակակիցները Արամայիս Երզնկյանի մասին.– Արամայիս Երզնկյան. դեմք՝ լեգենդ, էջ 45–46:*

Երզնկյանը միայն Երևանի և Թամանյանի ազգային ճարտարապետության ջատագովը չէր: Նա հայ ժողովրդի կենսագործունեության ջերմեռանդ պաշտպանը և հովանավորն էր բոլոր ոլորտներում: Խոսուն է մայրենի լեզվի կարևորումը՝ որպես ազգային ոգու պահպանության և զարգացման գործոնի: 1922 թ. ապրիլին սփյուռքահայ մամուլում տպագրվել են նրա խոսքերն այդ մասին. «Ոչ պետական լեզվով, ոչ հայերենով գրված փաստաթղթերը իմ կողմից կմնան առանց հետևանքի և առանց պատասխանի, որքան էլ որ նրանք կրեն շտապողական ու կարևոր բնույթ»[16]:

Արամայիս Երզնկյանը (կենտրոնում) Ֆրիտյոֆ Նանսենի գլխավորած Ազգերի Լիգայի հանձնաժողովի հետ բանակցությունների ժամանակ, Երևան, 1925 թ. (Ա. Երզնկյանից աջ՝ Ա. Թամանյան, Ֆ. Նանսեն)

Երզնկյանը հայ առաջին պետական գործիչն էր, որ դուրս եկավ համազգային շրջանակից: Մ Սարյանը 1924 թ. սեպտեմբերին Ա. Մյասնիկյանին գրում է. «Մենք պետք է այնտեղ (արտասահման – Գ. Շ.) ուղարկենք մեր ուժեղ, կիրթ լավագույն աշխատողներին: Շատ ուրախ եմ, որ այնտեղ է գնացել Արամայիս Երզնկյանը: Կարծում եմ, նա շատ բան կանի»[17]: Եվ արեց՝ դրեց հիմքերը Հայրենիք-Սփյուռք կապերի, նպաստեց աշխարհասփյուռ մեր ժողովրդի համախմբմանը, կազմակերպեց նյութական աջակցություն ու բարեգործություն, հիմքեր նախապատրաստեց հայրենադարձության համար:

…Ծանոթանալով Ժողտան աներևակայելի բարդություններով և վայրիվերումներով անցած ճանապարհին՝ կարելի է համոզվել, որ կառույցը կյանքի չէր կոչվի և զոհ կգնար վարչարարական կամայականություններին և ընդդիմադիր կրքերին, քանի որ շինարարությունը դեռ չսկսված՝ 1930 թ. մարտին, այն որակվում էր որպես «ակադեմիզմի և թանգարանային հնագիտության արդյունք, ոչ մի կապ չունեցող ժամանակի կուլտուրական պահանջների հետ, հենց իր հիմքով հետադի-

[16] *Նույն տեղում, էջ 13–14:*

[17] *Մ. Ս ա ր յ ա ն. Նամակներ, էջ 266:*

մական և օտար», և Ժողտան փոխարեն առաջարկում էին կառուցել «պրոլետարական կուլտուրայի դարբնոց, որը և բովանդակությամբ և ձևով կհամապատասխանի սոցիալիստական շինարարության պահանջներին»[18]: Որքան կամք, համոզելու ուժ և հավատ էր պետք, որ նման պայմաններում հնարավոր լիներ այն սկսել և ավարտին հասցնել:

Ժողտան համար ճակատագրական էր 1936 թվականը, երբ «միջոցների բացակայության պատճառով» դադարեցված էր ֆինանսավորումը, խնդիր էր դրվում վերանայել ու էժանացնել նախագիծը: Ա. Երզնկյանը կարողանում է Անդրժողկոմխորհում ապացուցել, որ շինարարությունը պետք է շարունակել և ավարտին հասցնել այնպես, ինչպես նախատեսել է Թամանյանը, որ շինարարությանը հետևում է ողջ արտերկրի հայությունը, և ԽՍՀՄ-ի միջազգային հեղինակությունը մեծ չափով կախված է դրա լուծումից: Հետագայում Երզնկյանին մեղադրում են, որ նա Անդրֆեդերացիայի տարբեր մարմիններում աշխատող «հայ ազգայնամոլների» հետ ճնշում է գործադրել տեխնիկական հանձնաժողովի անդամների վրա:

1936 թ. նոյեմբերին, որպես «ժողովրդի թշնամու և աջտրոցկիստականի», կալանավորելով Երզնկյանին, նրան ամեն կերպ ստիպում էին կեղծ ցուցմունքներ տալ Թամանյանի վերաբերյալ՝ վերջինիս անունն էլ արատավորելու և քաղաքական բանսարկությունների ոլորտը ներքաշելու համար: Երզնկյանը, չանսալով ահավոր կտտանքներին, համառորեն չի դավաճանում իր սկզբունքներին: Նա անեղեր ու հաստատակամորեն քանիցս նշում է. «Ակադեմիկոս Թամանյանը եղել է հայ ուղենշափոխական ինտելիգենցիայի վառ ներկայացուցիչներից մեկը… Նա անկեղծորեն և նվիրված աշխատեց խորհրդային իշխանության համար … Ես նրա նախագծերով կառուցել եմ Անասնաբուժական ինստիտուտը, Հողժողկոմատը և Ժողտունը: Թամանյանի վերցրած ուղին և մշակութային ժառանգության օգտագործումը ռեալիստական է, ճիշտ…»[19]: Ազնվությունը, վեհությունը նրա էությունն էին: Եվ նա գոհվեց՝ չխոնարհելով իր հպարտ գլուխը, չընդունելով իրեն ներկայացված շինծու մեղադրանքները, չստորագրելով ոչ մի ստոր ցուցմունքի տակ: 1935 թ., երբ նրան մեղադրում էին «ազգայնականության և ուկլոնիզմի» մեջ, նա այն ժամանակ էլ ծնկի չեկավ, ընդհակառակը՝ կարդաց իր մեղադրականը. «Հայաստանն այսօր շղթայված, քայքայված երկիր է, ուր կուսակցությունը նենգափոխվել է չեկիստների իշխանությամբ»[20]: Եվ դա այն ժամանակ, երբ երկրում սկսվել էին զանգվածային բռնաճնշումները, երբ Երզնկյանին և շատերին քիչ ժամանակ էր մնացել:

Իր կարճատև, ողբերգական կյանքի ընթացքում Ա. Երզնկյանը հասավ մեծ ժողովրդականության, ինչպես ժամանակին՝ Թումանյանը, Անդրանիկը, Կոմիտասը... և կհասներ առավելին, եթե մահասփյուռ 1937-ը չխեղեր մարդկանց ու-

---

[18] Вместо "Народного дома" построим кузницу пролетарской культуры. (Письмо в редакцию).– "Заря Востока", 3.III.1930.

[19] *ՀԱԱ, Ալ. Թամանյանի ֆոնդ, № 19114, 4. XII. 1936 թ. արձանագրություն:*

[20] *Գ. Ղ ա ր ի բ ջ ա ն յ ա ն. Մեր ազգային հպարտությունը.– Արամայիս Երզնկյան. դեմք՝ լեգենդ, էջ 15: Տե՛ս նաև ՀԱԱ, Ալ. Թամանյանի ֆոնդ, ՀԿ(բ)Պ ԿԿ-ի և ԵրԿ(բ)Պ քաղկոմի 1935 թ. հոկտեմբերի 4–5-ի միացյալ պլենումի արձանագրությունը:*

ղեղն ու հոգին: Դրա դրսևորումներից են Վ. Ալազանի, Ե. Չարենցի ժողովրդական իմաստնությամբ, հումորով և խորությամբ լի պարոդիաները: Ալազանը 1932-ին գրած «Նվեր ընկերական» պարոդիայում ներկայացնում է Ժողտան շինարարության երկունքով ընթացող, տխուր վիճակը, Արամայիս Երզնկյանի մեծ հեղինակությունը.

Երկներ երկիր (ոչ երկինք),
Երկներ քաղաքն Երևան...
Ընդ երկունքի՝ դրամ ու թի՛վ ելաներ,
Ընդ երկունքի՝ նախահաշի՛վ ելաներ,
Ընդ երկունքի՝ խոստում անթի՛վ ելաներ,
Գիշեր ու տի՛վ ելաներ:
Ընդ երկունքի՝ Ժողտուն բնավ ելաներ[21]:

Չարենցի գրածը (1927 թ.) առավելապես վերաբերում է Երզնկյանի անձին, նրա բազմակողմանի, ամենահաս, ամենակարող գործունեությանը՝ շատ դիպուկ, տեղին և ճշմարիտ բնութագրումներով.

Կոմիսար է, Շինարար է, Անձեռագործ Մեծ հողագործ:
Եթե կուզես՝ Գյուղատնտես, Անասնապահ, Անտառապահ:
Ջուր է հանում, Այգի տնկում, Գյուղ ու քաղաք Կառուցանում:
Ծիծաղերես Ու ժպտերես, Առակախոս, Ճարտարախոս,
Շնորհքով է քանց Եզոպոս[22]:

Բազմակողմանի ու բազմաբնույթ ընդգրկում ունի Ա. Երզնկյանի գործունեությունը՝ տնտեսություն, մշակույթ, արտաքին հարաբերություններ, կրթություն, ջրաշինարարություն, Սևանի պրոբլեմ, քաղաքաշինության ու ճարտարապետության ոլորտ և վերակառուցման ու զարգացման այլ խնդիրներ: Նրա արխիվը լիովին ոչնչացված է, սակավ են վավերագրերը, փաստական նյութը, այնուամենայնիվ, եղածից էլ, հատկապես ժամանակակիցների հուշերից՝ թեկուզ հետահայաց, ակնհայտ է այն վճռորոշ դերը, որ կատարել է այդ ականավոր գործիչը մեր երկրի կյանքի մի բախտորոշ ժամանակաշրջանում:

Ամենաջերմ և արժանահավատ խոսքերով են բնութագրում ու գնահատում Արամայիս Երզնկյանին նրա հետ առնչված մարդիկ, գործընկերները, բարեկամները, ծանոթները՝ բոլորը, այդ թվում՝ ռուս, վրացի, ուկրաինացի և այլ ազգություններին պատկանող՝ և հարազատներ, և օտարներ: Դրանցում շատ են նաև այն բնութագրումները, որոնցում ներկայացվում է Երզնկյանը որպես շինարար, ստեղծագործող, մեծ Թամանյանի անձը և գործը գնահատող ու նրան ամենուրեք սատարող: Ահավասիկ՝ «Եթե կա մեկը, որի անունը Երևանի քաղաքացիները հպարտությամբ ու երախտագիտությամբ են հիշում հանճարեղ Թամանյանի

[21] *Ա լ ա զ ա ն. Պարոդիա.– «Խորհրդային արվեստ», 1932, № 1, էջ 31:*
[22] *Ե. Չ ա ր ե ն ց. Արամայիս Երզնկյան.– Արամայիս Երզնկյան. դեմք՝ լեգենդ, էջ 39:*

կողքին, դա Թամանյանի մեծագործությունը պաշտպանող Արամայիս Երզնկյանի անունն է» (Ա. Հովհաննիսյան)[23] *կամ՝ «Եվ ճարտարապետ Թամանյանի, և ամբողջությամբ Հայաստանի բախտն է պարզապես բերել, որ նրանք ունեն Արամայիս Երզնկյանի նման նշանավոր ղեկավար, նշանավոր՝ բոլոր պարագաներում» (Եվգ. Լանսերե)*[24]*: Աներևակայելի և պատկերացումից դուրս են այդ բնութագրումները, թվում է, թե Երզնկյանը կերտված է եղել ոչ թե միս ու արյունից, այլ ֆանտաստիկ, երևակայական, վերացական գաղափարներից, որ եղել է ոչ թե մարդ, այլ, իրոք, լեգենդ, միֆ, անէական մտապատկեր: Զարմանում ես, թե Աստված ինչքան շատ կարող է տալ Մեկին և ինչքան շատ կարող է խլել Մեկից:*

Եղել են անհատներ, որոնք իրենց կյանքով, գործունեությամբ, մարդկային նկարագրով ունեցել են շատ ընդհանրություններ, բնավորության գծեր, նրանցից շատերն առնչվել են միմյանց հետ, եղել են ընկերներ, մտերիմներ, հաճախ կազմելով, կարծեք թե, երկվորյակ զույգեր: Ասվածի առավել բնորոշ օրինակն է Ալեքսանդր Թամանյան–Արամայիս Երզնկյան զույգը: Երկուսն էլ ծնվել են գրեթե նույն տարում (1878, 1879 թթ.), կյանքից հեռացել են նույն տարիքում (58)՝ գրեթե նույն տարում (1936, 1937 թթ.), բարձրագույն կրթություն ստացել են հայրենիքից դուրս՝ մեծ ճանաչում ունեցող հաստատություններում (Պետերբուրգի Գեղարվեստից ակադեմիայի բարձրագույն գեղարվեստական ուսումնարան, Ժնևի համալսարան), 1936-37-ին ենթարկվել են բռնաճնշումների (Թամանյանը՝ հետմահու), եղել են աշխատանքային և մարդկային առումով բացառիկ ջերմությամբ կապված մտերիմներ, իրենց գործունեությամբ դուրս են եկել ազգային շրջանակներից, գտել լայն ճանաչում, թողել են խոր հետք հայ ժողովրդի պատմության և մշակութային կյանքի զարգացման գործում: Երկուսն էլ իրենց քայլքով, կեցվածքով, միջինից բարձր հասակով, դեմքի հայկական շեշտված գծերով, բեղ-մորուքով, քնքշություն և հարազատություն ճառագող նայվածքով շատ են հիշեցրել Հովհաննես Թումանյանին ու ներդաշնակել միմյանց:

АЛЕКСАНДР ТАМАНЯН И АРАМАИС ЕРЗНКЯН

ГАРНИК ШАХКЯН

Резюме

Благодаря плодотворному сотрудничеству академика архитектуры Александра Таманяна и видного государственного деятеля Арамаиса Ерзнкяна в трудных условиях 1930-х годов были осуществлены многие гениальные проекты великого архитектора. В частности, только их совместными усилиями стало возможным преодолеть множество разнообразных препятствий, которые возникали при строительстве здания оперы и балета.

[23] *Ժամանակակիցները Արամայիս Երզնկյանի մասին.– Արամայիս Երզնկյան. դեմք՝ լեգենդ, էջ 46:*

[24] *Նույն տեղում, էջ 49:.*